զօրամասով։ Նա իր ձեռքը առաւ չրջանի իշխանութիւնը, ապր. 15–ին զօրահաւաք յայտարարեց Վարանդայում ու Դիզակում, ամրացրեց ճակատները և 45 օր չարունակ մնաց Ղարաբաղում։ Ապր. 22–ին Թաղավարդ գիւղում հրաւիրուեց Ղարաբաղի 9րդ համագումարը, որը 44 ձայնով մէկի դէմ մի անգամ էլ որոշեց մերժել Ազրբէջանի իշխանութիւնը և Ղարաբաղը համարել Հայաստանի մաս։

Դրօի հասնելուց յետոյ Ազրբէջանի բանակն այլևս առանձին կենդանութիւն ցոյց չուեց. մի կողմից Բաքւում տեղի էին ունենում ներքին խմորումներ ու բոլշևիկեան չարժումներ, միւս կողմից Թիֆլիսում դաշնակիցները և Անդրկովկասեան Ժողհրդաժողովը պահանջում էին վերջ տալ արիւնհեղութեան։ Զենթարկուել չէր կարելի. ազմուկն ու սպառնալիքը չատ մեծ էր։

Եւ, իրօք, Ղարաբաղի ապստամբութեան և Շուշիի կոտորածի լուրը Թիֆլիսում ցնցող տպաւորութիւն գործեց։ Այն պահուն, երբ կարմիր բանակի առաջապահները կանգնած էին Անդրկովկասի դրանը, ընդհարումը հանրապետութիւնների միջև կարող էր դառնալ ճակատագրական։

Մարտ 27–ին Ղարաբաղի Հայրենակցական Միութեան ներկայացուցիչներ Գ. Բալայեանը և Լէօն մի յուշագիր ներկայացրեցին Անգլիայի, Ֆրանսայի, Իտալիայի ու Յունաստանի ներկայացուցիչներին, դնդ. Հասկելին, Հայաստանի վարչապետին և Վրաստանի կառավարութեան՝ խնդրելով նրանց միջնորդութիւնը Ղարաբաղի հարցում։ Նրանք պահանջում էին՝ անմիջապէս հեռացնել ազրբէջանեան զօրամասերը, բանալ ճանապարհները և յարգել օգոստ. 22–ի համաձայնութիւնը։

Նոյն օրը Վրաստանի վարչապետ Ժորդանիան դիմեց դաշնակիցների ներկայացուցիչներին՝ խնդրելով նրանց միջնորդութիւնը՝ մարելու համար Ղարաբաղի հրդեհը։ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներ Ուօրդրոպը, կոմս Մարտէլը և գնդ. Գարրան, ապր. 1–ին, հատուկ մի հեռագրով դիմեցին Բաքու ու Երևան՝ «եռանդուղին հրաւիրելով» խաղաղ միջոցներով և անյապաղ լուծել Ղարաբաղի և ուրիշ դաւառների հարցերը, ուր խաղաղութիւնը վտանգուած է»։ «Հաշտութեան այս հանդիսաւոր կոչը եթէ չլսւի ճիշտ այն ժամին, երբ, թերևս, ամբողջ Անդրկովկասի բախտը վճռուելու վրա է, կարող է չատ ծանր հետևանքներ ունենալ ձեր կառավարութիւնների համար»։

Հայաստանի կառավարութիւնը խոհոյն և եթ, ապր. 2–ին, պատասխանեց, թէ ինքը բոլորովին համամիտ է դաշնակից ներկայացուցիչների առաջարկին և իր պատգամաւորները ապր. 5–ին կը լինեն Թիֆլիսում՝ մասնակցելու համար անդրկովկասեան խորհրդաժողովին՝ նպատակ ունենալով խաղաղութեամբ լուծել բոլոր վիճելի խնդիրները։ Ապր. 4–ին Հայաստանի Ժողհրդարանն էլ զբաղուեց Ղարաբաղի զէպքերով և հաւանութիւն տուեց կառավարութեան հետևած քաղաքականութեան։